ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ»:

Մեր սիրտը ուրախությամբ լի, այսօր բերում ենք Ձեզ Սուրբ Էջմիածնի հոգևոր բարձունքից լույս ավետիսը Սուրբ Ծննդյան Փրկչին մեր Հիսուսի Քրիստոսի:

Այսօր տոն է աննման, վասնզի մեր հոգիները, մեր կյանքը վերստին լուսավորվում են վերանորոգվելու հույսով և փրկության տեսիլքով: Այո, Քրիստոս մեր նորոգումն է և մեր հույսը փրկության: Երկրային մեր կյանքում մեկ առաջնորդ լույսն է նա և մեր բարի գործերի ստուգությունը: Իսկ պատմության մեջ, իր ավետարանով, Քրիստոս «արեգակ է արդարութեան» և «իշխան խաղաղութեան»:

Նոր ծնվող Աստվածորդու մսուրի առաջ աղոթում ենք, որ մարդիկ ապրեն իրենց ժամանակը, գործեն՝ երկնային կյանքի տեսիլքով, և ազգեր ու պետություններ առաջնորդվեն քրիստոսավանդ խաղաղարար ոգով և արդարության լույսով: Եղիցի, եղիցի:

Սուրբ Ծննդյան ավետիսով այսու հղում ենք Մեր եղբայրական սերը և օրհնությունը պատմական Աթոռիդ միաբանության և համայն հավատացյալ ժողովրդյան հոգեշեն ու ազգանվեր գործոց լիակատար հաջողությամբ:

Շնորհավորում ենք Ձեր Նոր տարին և լուսաբաշխ Ծնունդը մեր Տիրոջ Հիսուսի Քրիստոսի:

«Այսուհետեւ արդարացեալք ի հաւատոց անտի, խաղաղութիւն կալցուք առ Աստուած ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» (Հռոմ. Ե 1): Ամեն:

Եղբայրական սիրո ողջագուրումով՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

*
* *

Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից զգացմունքներով վեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց վանական կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար: